



(Տես յէջ 44)

Թեոփիլոս վերջապէս որոշեց լինել թողութիւնս քովը պահել, որուն կայսերական պալատին մէջ ըլլալովն շատ նուազեցաւ հալածանքը: Թեոփիլոս թէպէտ պատկերամարտ մնաց, բայց այն ատենէն սկսաւ քիչ մը թուով թիւն տալ ուղղափառաց: Մեթոդիոսը հետը տարաւ երբոր Ակարեանց եւ ուրիշ անհաւատից գէժ պատերազմի գնաց. իւր մահուան անկողնոյն մէջ 842ին, կ'ըսեն բարեպաշտ Պատմագիրք որ զըջացեալ սրտիւ մինչև Աստուածածնայ պատկերը համբուրէց, զոր թողորս կայսրուհին իրեն ներկայացուց: Իրմով լինցաւ պատկերամարտից հերետիկոսութեան պաշտօնական եղութիւնը, որ կը տիրէր Բիւզանդիոյ մէջ, գրեթէ անընդհատ մէկ գարէն աւելի: Թեոդորոս խնամակալ ըլլալով Միքայէլ տղուն, թէ և շատ կը յարգէր Թեոփիլոսի յեշատակը, անմիջապէս պատկերաց յարգութիւնը վերահաստատեց: Շատ բարեպաշտ կ'ին մը ըլլալով, ամեն գոհարութեանց յաղթեց, հոգաւոր հրովարտակով մը վճռեց որ պատկերամարտից տիրապետութիւնը դադրած էր, և թէ դարձեալ պաշտօնապէս հաստատուած էր պատկերայն յարգութիւնը: Ամեն եկեղեցեաց մէջ, բոլոր հասարակաց տեղուանք պատկերները դուրսէն: Հերետիկոս պատրիարքն՝ Յովհաննէս Լեքանովան տվաւ իր անուանեցաւ, և Մեթոդիոս իւր պատրիարքութեան ամիսը նստաւ գարձեալ: Յովհաննէս ժողովրդեան գուժը շարժելու համար իր մէկ երակը բացաւ, և ժողովրդեան գիմաց ելաւ բոլորովին արեւնոտած, բայց այս խաբէութեան չհաւատացին, և զինքը վաճեց մը փակեցին:

Փառաւոր հանդիսով, ինչպէս որ Բիւզանդական պաշտօնութիւնը միայն կրնար ցուցնել, նորէն հաստատուեցաւ հին կրօնը Սուրբ Սոփիայի մէջ, ուր որ Թեոդորոս հրաւիրած էր պատկերապաշտից բազմութիւնը, որ մէկ դարու մը միջոց հալածանաց ժամանակ աղատած էին հաւատացելու բարեպաշտութեանմէն: Հազարաւոր կրօնաւորներ աքսորուած որ եկած էին Եւրոպիոյ և Ասիոյ միաստաններէն, Ոլիւպոսի և Ալեքս լեւոնայ անառններէն, Արսիոսընի կղզեաց ամուսնէն կամ Պեղոպոնէսի խո-

րերէն կրելով իրենց մարմնոյն վրայ երկայն չարարանաց և կամ զարհուրելի տանջանաց նշանները, այս ամէն խոտորանողք, ոմանք կուրցած, այլք խեղեալ անդամք, վաղեցին մասնակից ըլլալու այս երեւելի հանդիսին, զոր Յոյն եկեղեցին մինչև ցայսօր կը տօնէ Տօն ողորպառնութեան անուամբ:

Պատկերամարտները հրապարակաւ նստեցան, պատկերաւոր ժողովքէն: Կայսրուհւոյն ազաւանքովն և սպանաւորներէն, և մանաւանդ աւելի իւր սուգներովն, որով կ'ապահովընէր թէ Թեոփիլոս իւր մահուան անկողնոյն մէջ զըջացէր, վերջապէս միջնորդութեամբ նոր պատրիարքէն, որ մոռնալով իւր Թեոփիլոսէն քաշած այնպիսի շարարանները, խնդրեց որ բացաւ թիւն մի ըլլայ մեռած կայսեր համար: Հրապարակուեցաւ արձակալ ի բանագործանայ յարգմէն ինչպէս կ'ընէր ինքնօրէն այդպէս մը կատարեցին Թեոփիլոսի հոգւոյն համար մեծ եկեղեցւոյ մէջ. և կ'ըսէ Լըզոյ, թէ հասարակաց կարծիքն եղաւ որ կայսրը գոհիքէ արժանի եղած ըլլալովն իւր մեռնելէն վերջը, այն յաւիտեան կան տանջանքներէն ազաւանցաւ, եպիսկոպոսաց արձակմամբ և հաւատացելոց աղօթիւքը: Այն անվերջանալի մեծ հանգէսներուն ատեն, Թեոդորոս կերակուրի հրաւիրած էր խոտորանողները նոր Գարիանայի պալատին մէջ անոնցմէ մէկը հռչակաւորն Թեոփանոս, մոռնալով խոտորանը չանիծանելու զԹեոփիլոս, ինչքովն եղած անեծք կարդաց անոր յիշատակին, իւր վշտացեալ այրի կնիքն դիմաց, իսկ Մեթոդիոս խոտորանը յանգեց զինքն:

Բայց նախկին պատկերամարտ պատրիարքը վաճէր մէջ կէս իսնիմ գարձեր էր իւր բարկութենէն, իւր տղայական բարկութեան մէջ, յանգեցեալ մինչ անգամ Աստուածածնայ մէկ պատկերին առնելու իւր վրէժը, պատկերին ալքերը հանելով Թեոդորոս ամաշ ուղղեց նոյն պատիժը առ իրեն ալ, և զիջը բաւական սեպեց երկու հարիւր հարուած տալ կաշեայ խարաղանով մը, որուն ծայրը կապարե գնդակներ կաշին: Այս պատժոյն վրէժը առաւ պատկերա-

մարտ բանտարկեալն՝ ոսք հանելով իւր կողմնակիցները որ պալատին և քաղաքին մէջ լեցուն էին, անբարոյականութեան զգուշի ամբաստանութիւն մ'ընելով իր յարգելի յաջորդին: Մեծոգիոս շատ դժուարութիւն չբաշխեց ինք զինքը արդարացրելու եկեղեցական ասեանին մը գիւմաց՝ որ այս բանին համար գումարած էր: Սուտ զրպարտիչները բոլորովին ամբթով մնացին, և ասով պատկերամարտութիւնը բոլորովին ընդունեցաւ:

Մեծոգիոս իւր քրիստոնէական սիրովն Լեւ. քանոմանտին և միւս զրպարտչաց ազատութիւն շնորհէլ տուաւ միայն ուղեց որ ամէն տարի հանգիստաւոր Թափորին մէջ, որ Սուրբ Սոփիա եկեղեցին կ'ըլլար, ուղղափառութեան հաստատութեան տունին, ասոնք Թափորին առջևէն երթան, շապկանց և բոկոսն, խոշոր կերտներ ձեռուընին, և մտիկ ընեն այն վիճակին մէջ իրենց հերետիկոսութեանը վրայ կարգացուած նշովն: Մինչև իրենց մահը այս նուազատեղեցիք պարտուց տակը մնացին: Մեծոգիոս մեռնելէն առաջ՝ գեղեցիկ օր մ'ալ ունեցաւ, երբ որ իւր խնդրանքն, կայսրուհին բերել տուաւ մեծ եկեղեցւոյ մէջ, և անտի Սուրբ Առաքելոց եկեղեցի փոխադրուեցաւ Նիկեփորոս ուղղափառ պատրիարքին մարմինը, որ Վստփորոնի մէջ աքսորուած մեռած էր տաննալից տարի առաջ: Երեսասարդ կայսրը և բոլոր ժողովուրդը ձեռուընին մոմերով գիւմարեցին մարմինը: Այս վերջին յաղթութեանէն երեք ամիս վերջը մայիս ամսուս մէջ 846ին Մեծոգիոս հիւժեղ իր առաջին տանջանքներէն, շատ մեծ յարգութիւն ունի Յոյն եկեղեցւոյն մէջ: Ինքն ալ Սուրբ Առաքելոց եկեղեցւոյն մէջ թաղուեցաւ: Այս երևելի տաճար, Բիւզանդիոյ շքմարիտ Պանթեոնն էր Կոստանդինուսի յաջորդաց: Այս տաճարին տեղն հիմայ շինուած են Սուլթան Վ'էհմեթի մզկիթին և իւր յարակից շէնքերն:

Մեծոգիոսի տեղն պատրիարքական աթոռն անցաւ Նիկեայի տաճարին ի կրօնի Իգնատիոս, Միքայել Բանկապէ կայսեր սրդին, որ այն առեւ Սուրբ — Սարգիսի վանաց մեծաւորն էր: Արքեի տեսնեք առաջ այս մարդոյ Բրդդի կղզւոյն մէջ աքսորուած իր հօրը քով: Քիչ տառնէն գարեհալ զինքը պիտի տեսնէք աքսորուած, բայց այս անգամ Դերեպէնտին կղզեակն:

Մեծոգիոսին մէկ յիշատակը միայն մնացած է Անդիպոնի կղզւոյն մէջ. Սուրբ Յովհաննէս Մկրտչին եկեղեցին, որ մինչև հիմայ գեղին եկեղեցին է: Շատ հին է, և որչափ ալ Թուրքաց

Կոստանդնուպոլիսը առնելէն վերջը մեծաւ մասամբ նորոգութիւններն փայտէ շինուած են, բայց մէջ տեղի մասը գեռ ևս մնացած է քարաշէն: Շատ հաւանական է որ այս Մեծոգիոսի ատենէն է իրաւցընէ. Պատմագիրք կ'ըսեն Թեոդորա Մեծոգիոսի աղայանք ոչ իբր իւր քաշած տանջանքներուն համար, այլ միայն իր սիրելի երկան հոգւոյն փրկութեանը համար, որուն և տակէն ինկած էր, այս եկեղեցին շինել տուաւ, նոյն այն շէնքին վրայ՝ ուր որ պատրարքն իւր բանտարգելութիւնը քաշած էր: Եւնքին ձևը կ'երևի Թէ կը յիշեցնէ սրբուհւոյն Թեոգոսիոյ գեղեցիկ եկեղեցին, որ Բիւզանդիոյ մէջ շինուած էր, և զոր Սուլթան Սելիմ մզկիթ դարձուց և շատ գեղեցիկ անուն մը կը կրէ: Վարդի մզկիթ, Կիչլ ձափիս, վանն զի մզկիթին շրջակայքը ընդարձակ վարդանոցներ են, Օթքա կիսիս ըսուած վարդին, որուն աղնուադոյնը այս պարտէզներն կ'ըլլէ:

Շատ հաւանական է որ Թեոդորա այս եկեղեցւոյն քով վանք մ'ալ շինել տուած ըլլայ, որուն հետքը մնացած է: Միայն ջրեղը մը գեռ կը տեսնուի: Ըստ Կոստանդիոս պատրիարքին՝ հիմայ ալ պիտի ըլլայ, և կամ գեռ իր ժամանակը կար եկեղեցւոյն միջավայրը շատ լինարձանաբարութիւն մը, որ կը հաստատուէն Մեծոգիոսին բանտը հոն կը գտնուէր: Երբ Անդիպոնի եկեղեցին այնցնութեան գացի, Բիւզանդիոյ հնութեանց հմուտ ընկերոջ մը հետ, չնքանք գտնել այն կարեւոր արձանագրութիւնը: Սորիկաւք մը որ զմեզ կը պտըտցընէր, կարծես Թէ իւր տղիւսութեամբ՝ մոռցեր էր երևելի մարգուն անունն անգամ, որ այն տեղուանքը այնչափ անուանի ըրեր էր: Մեղի մտած սեծակ մը ջրցուց որ հաւանականաբար Մեծոգիոսի բանտին տեղ կը սեպուէ: Ինչ որ ըլլայ՝ երևելի մարտիրոսն իրականապէս այն տեղ քաշեց չարաբոյնը բանտարգելութիւնը, և եկեղեցին, և կամ ինչ որ մնացած է հին շէնքէն, իւր մահուան ժամանակներն կրնայ շինուած ըլլալ: Եկեղեցին ճիշդ ի իւզանդական եկեղեցւոյն ձևն ունի, աղքատ և խեղճ ոճով և պղտիկ, որ գեռ շատ կը գտնուէն Կոստանդնուպոլսոյ արուարձանաց մէջ, և բոլորովին կորսուած են ճերմակ ծեփերու տակ, և կամ մզկիթ եղած են, քովը մինարէ մը աւելցուցած: Յունական խաչը, իւր բարձրատեսակ ձևերով ծածկած է Անդիպոնի եկեղեցւոյն կիսակործան պատերն: Բանի մը քանդակաւ խոյակներ, մարտը և Գիւզանդական ոճով գրուադներ, ապիս անդին նոր ծեփերու տակէն դուրս ցցուած են. Եկեղեցւոյն փայ-

տաշեն միջավայրը խեղճուկ զարգարաններով լի է։ Միայն գեղեցիկ տապանաբար մը կայ, որոյ վրայի գերբն անընթեռնել եղած են, վրան Լատին աղգատոհմի մը նշանը կայ որ զարմանալի բան մ'է այս անդերոս ճամբար։ Թերևս Վէնետեցիք Պալլոյ մը կամ Վալաթիոյ Գրետուսի խնամակալի մ'է, որ յունական կրօնն ընդունած ըլլայ։

Կը տեսնուի որ հնագիտի մը ճամբար քիչ բան կայ Անգիգոնի եկեղեցւոյն մէջ, բայց այստեղ ամենայնիւ անշնչոն շէնքը արժանի է այցելութեան մը 'ի յիշատակ Սուրբ Մեթոդիոսին, որուն մեծն է գեղեցիկ չարաբարեալ գէմքն կը կանգնի այս ամենէն անդուլթ և սոսկալի պատմութեան մէջ։ Այս կենդանի վայն այն ահաւոր տեսնուան, յորում մարդ մը որչափ մեծ, երևելի և առաքելնի ըլլար, այնչափ աւելի վառնիկ մէջ էր նախատանայ և չարաբանայ, արժանի է որ ճամբարը, որ կը սիրէ հին յիշատակները, հոն այցելութիւն մը ընէ։ Կրնայ այն լուս. եկեղեցւոյն մէջ ուր ամենեւին դարձ փայն մը շուտուի, միտքը բերել այնչափ երևելի մարդիկը կրակոտ Թեոփիլոսը, անվախ Մեթոդիոսը, բարեպաշտ և քաղցրաբարոյ Թեոդորան, կրօնամոլ Լեքանոմանսը և իւր մոլեռանգն կողմնակիցները, որ իւր աշակերտներն էին։

Սրբոր Սալբի կը ծառնաս, որ Անգիգոնէն քիչ հեռու է, ալ կը վերջնան մերկ ժայռերն, անբեր հողերն, և կը սկսին հովանաւոր զառ 'ի վայրեր, և գեղեցիկ տեսակետեր։ Սալբի ցանցառ ոտքներու անասունները, որք կղզեաց կարմրագոյն հողոյն վրայ կը բռնեն, մաթղենաւց (հոնա եկմէն) Թուփերն, կանաչազարդ կաղնիներն և ձկնեմներն, զուարթ նաւահան գիտող, գեղեցկադիր հրուանդաններն, առաջուտ խորներն, որ հարաւային կիկլադի առաւտ և տեղեակիտ ծառերով և բոյսերով պատած են հիանալի ճամբաներն, որ մեծամեծ ծառերուն տակէն օձապտոյտ զառ 'ի վեր կ'ենեն, և բարձրէն՝ կապուտակ ծովուն վրայ կ'ընային, և հրաշալի շրջապատներէր (panorama) կը ներկայացնեն, չեղէ և ընդարձակ վանքերն, որք չօրս կողմն կանաչներով պատած են, Սալբի կղզին, որ Մարմարայի մարգարիտն է, չքուղ և անմոռանալի գեղեցկութիւն մ'ունի, նման իտալական լճերուն զովութեան և վայելչութեան արևելքի մէջ՝ Նեապոլոյ խորին մէկ մասն է, վրան աւելցնելով Յունաստանի կապոյտ երկիւրքը, Մարմարայի պղպուտն ալիքերն, ճամբորդ մը որ առաւօտը Բերայի օժեանայ մէկուն տաք սենեակներէն ելլելով, այս կողմերս

գայ, յիրաւի մեծ ուրախութիւն մը կըզգայ, գիտելով այսպիսի փայլուն բնութիւն մը, այս կղզի ունիւնը, որ միակերպ կը զովանայ, և վայելչաւէն շինուած է 'ի նախախնամութենէ փոքրոտ և խզդուկ Սուամպոլին մօտ։ Այս կղզին այնպէս տապաւորութիւն մը կը թողու այցելուաց մտաց և աշուղը, զոր գծուար է մոռնալն։

Հալբի կամ Սալբի, ատենաք Փալքիսի կամ Փալքիսի կ'անուանէր, այս անունը պնդի հանքերէն անուանած է, որ հին ատեն իր մեծ հարստութիւնն էր, բայց հիմա երեսն ձգուած է։ Գիտմնէն հիմայ կը տեսնուին հին պեղմանց հետքերը, մանաւանդ գեղեցիկ պզտիկ ծոցին եւ զերքը քաճառականական զարդոյն ետևը։ Այս Մարմարայի պղինձը շատ յարգի էր Յունաց մէջ. շատ մը երևելի արձաններ այն պղինձով թափուած են, որոնց մէջ անուանի է Սիկիոնի Ապոլոնը, որ այդ գեղեցկութիւն 'իբրոյ քաղքին քաններէն մէկն է, ուր կ'ըսուի թէ քանդակարծութեան արուեստն բերած են, Կրետաքի Տիբեհոս և Սքլիթիս։

Սալբի վանքերը իշխանի կղզեաց ամենէն գեղեցիկներն են, և ամենէն անուանիներն են, բայց Անգիգոնի և Բրոդի վանաց պէս աքսորելոյ տեղ եղած չէ Բիւզանդական ժամանակները։ Սալբի իր գեղեցկութեամբ աւելի զբոսանալ տեղ եւ ղած է, քան թէ պատժոյ, և եթէ պաշտպանի իշխանք և իշխանութիւնը եկած են այս երկրակի կղզիս, աւելի կամաւոր աքսորեալք եղած են, քան թէ խեղճ աքսորեալներ, այն տեղը սպարելով խեղճութեան և կամ մահու։

Սալբի գեղին վրայ ըսելիք մը չկայ որ գեղեցիկ կերպով Բրինթեոյ նայողեղբաց վրայ տարածուած է։ Խուճք մը գիւղական սպարաւնից և փայտէ ատենբոլ։ Խուճք մը առանց պատմութեան, մանրիկ ծոցի մը վրայ, արևմտեան կողմէն նոճոյ երկայն ծառատունկ մը կայ, որ Սուրբ Գերորգի վանքը կը տանի, արեւելեան կողմը կ'ընայ գեղեցիկ հրուանդան մը, որուն վրայ Սուրբ Սրբորգութեան վանքը շինուած է։ Հիւսիսի կողմը կղզւոյ ամենէն բարձր գագաթը կը տեսնուի, անտառախիտ, ուր կը բարձրանայ հին գեղեցկատեսիլ աշտարակ մը որ հին ժամանակ գիտարան մ'էր, վերը եղած է հողմաշարժ աղբիւք մը, իսկ հիմայ կործանած է բոլորովին։

Սալբի երևելի եղած է հարկուաւոր վանքերովն, այս շէնքերը երեք են, որոնց մէկը այժմ գոյրած է։ Երկու միւսները շատոնց 'ի վեր իրենց գլխակը փոխած են։ Առաջինը՝ որ նախ ալքի կը զարնէ Անգիգոնէն գալու ատեն, Լատուածած

նայ վանքն է, կամ ինչպէս որ կ'ըսուի՝ թիեռտորոս, Մայր Աստուծոյ, շատ գեղեցիկ տեսք մը ունի Աոստանդնուպոլսոյ դիմացը: Կղզւոյն քաղաքէն ալ կրնայ երթիցոյսիլ պզտիկ կղզւոյն գեղեցկագոյն ճամբաներէ անցնելով, որ ծովուն երկայնութեամբ հոստաւէտ շոճինեցու, և արածաթգոյն ձիթեկեայ տակէն զառ'ի վայր մարգագիտաց մէկէն և ամեն մէկ դարձուածքին նորանոր տեսարաններով պզտիկ վայրերն ծոցերուն վրայ կ'ելլէ կ'իջնէ: Բնութեան դրսև տին մէջ ճմարիտ ճգնարան մ'է, որուն եղբայր Մարմարայի խաղաղ ծովը կը ծփայ, կրակէ երկընէ մը տակ: Եղբայր արծաթէ կայսի մը կը նմանի:

Այս առաջին վանքը կղզւոյն գլխաւորն է, ցայսօր ալ բոլոր Բուհաստանի մէջ անուանի է: Այս մեծ և ընդարձակ շէնքը, որ բոլորովին նորէն շինուած է երկու դարաւանդներու մէկ ծառազարդ և զովագին բարձրաւանդակի մը վրայ, ուր բարձրէն ծովուն վրայ սքանչելի տեսարան մը ունի, Բուհաց վաճառականութեան դպրոցն է, շատ ծաղկեալ, ինչպէս ամեն առանձնական առատածեղութեան շինուած հաստա տութիւնը այս ազգին, որ գիտութեան և կրթութեան ետեւէ է: Արդէն դարերէ 'ի վեր այս Մայր Աստուծոյ վանքը, Բուհաց ազգին կրօնական և մտադրական գլխաւոր կեդրոնն եղած է: Շատ մը Աոստանդնուպոլսոյ Յոյն պատրիարքներ հոն թաղուած են Սամանցաոց տիրապետութենէն 'ի վեր:

Շատ հաւանական է, և գրեթէ ստորագրելի, որ Բիւզանդիոյ կայսրութեան սկիզբէն 'ի վեր, այն տեղը վանք մը կար: Այս գեղեցիկ տեղերուն խորհրդաւոր լուսութիւնը, միայնութիւնը և վաեմութիւնը, շատոնց 'ի վեր հոն քաջած են հոգեսէր մարդիկ, որք մտաց ամբոփումն կը փնտենէ: Բայց շատերը կը միաբանին ըսել՝ որ ճմարիտ հիմնադիրն այդ շէնքերուն, որոնց մէկը այս արդի շէնքերն շինուած են, եղած է Յովհաննէս Ը. Պալէոլոգ, որ Բիւզանդիոյ կայսրաց վերջնութիւնն է: Այս կայսրը հաւանական բար, ինչպէս ըսինք, հնագոյն վանքի մը տեղը գեղեցիկ վանք մը շինել տուաւ, 'ի պատիւ Սուրբ Յովհաննէս Կարապետի, որ իւր անուանակից սուրբն էր:

Յովհաննէս Ը. երեխի է, իւր երկայն ճամբորդութեամբն յԱրևմուտ, և իւր ներկայութեամբն Փերսոպոլի ժողովքին, որ 1438ին գումարեցաւ Եւգինէոս քահանայապետին նախագահութեամբ և որ վերջէ Փրոքնետիս փոխարդուեցաւ ժամատարտին պատճառաւ: Կայսրը Բուհական եկեղեցւոյն Հոգովայ հետ

հաշտութիւնը ստորագրեց, բայց շատ ուշ՝ կայսրութեան մտահայ խորխորատէն աղատելու, և չ'այնորդեցաւ իսկ ժողովրդեան կրօնամոլութեան պատճառաւ:

Այս աստուածաբան կայսրը, որուն խաւիոյ մէջ երկայն ատեն անցընելն լի գարուն պատմութեան մէջ գլխաւոր տեղ մը կը բռնէ, յաջորդաբար երեք կնիկ ունեցաւ: Ի 1414 երբ դեռ Թագաժառանգ իշխան էր, իւր հայրը իմ մանուէլը գնելը կարգէ պզտիկ Ռուս իշխանուհւոյ մը հետ, որ էր Աննա, տառնուէկ տաբուան, դուստր Վասիլ Բ. Դեռտեան Մոսկուայի մեծ դքսին: Եղբայր աղջիկը, որ ամենուն սիրելի եղած էր, երեք տարեկն մեռաւ, ժամատարտի ատեն, որ Բիւզանդիոյ մէջ շատ ընդունաւ և որ Պալէոլոգ, դարձեալ կարգուեցաւ 1420ին նոյեմբեր ամսուն մէջ ընդ Սոփիայ, որ էր Յովհաննէս Բ. Մոնփերրագի մարգիդին և ի զապէի Մայրոգա կղզւոյն իշխանուհւոյն աղջիկը: Այս ատեն կայսրութեան ամբողջ ալ եղաւ իւր հորը, որ արդէն շատ ծեր էր: Իսալացի իշխանուհին Պալէոլոգին անուանեցաւ: Այս երկրորդ միութիւնը, որուն պատճառ 1421 յունվարի 19ին միայն կատարուեցաւ, շատ թշուառ եղաւ: Սոփիա գիտուն, բարի, քաղցրաբար, կին մ'էր, և շատ բարձր կրթութիւն մ'ունէր՝ բայց այնչափ տգեղ էր, որ Յովհաննէս երբեք չուզեց իւր կինը սեպել:

Պատկն չբացաւ, և իշխանուհին, որ Մարտինոս Երէն հրամանաւր, որ կուզէր կայսրը դարձեալ քաղցրուեցաւ շահելու, կրցած էր հերձուածող իշխանի մը հետ մարգուիլ, իւր կրօնքը պահելով, վեց տարի խեղճութեամբ ապրեցաւ: Անկէ ետքն չկարենալով այլ ևս համբերել Յովհաննէս Պալէոլոգին՝ իւր խառնակեաց ամուսնոյն, զոր այնչափ սիրած էր, միտքը դրաւ իւր գիտացելի պէս անկէ բաժնուիլ: Մանուէլի մահուանէն և Յովհաննէսին Թագաւորելէն տարի մը վերջը, գեղեցիկ իրկոսն մը անցաւ Ոսկիդիւրէն և փախաւ Ղալաթիոյ գէնովացոց քով, որք իւր հայրենակիցքն էին: Ասոնք շատ ուրախացան, որ ատելի Պալէոլոգին խաղ մը կարենան պիտի խաղալ, աճապարեցին և խալքեցին իշխանուհին յԱւուպա, իրենց մէկ նաւով որ Թառապէն կուգար Աղաթու ծովուն խորէն: Սոփիա Թագաւորական պատուով ընդունուեցաւ 'ի Դեռուա, և գնաց շուտ մը վանք քաղուեցաւ, ծածկելու իւր ցաւը որ մահուամբ միայն լընցաւ: Ուրիշ պարագայի մէջ Ղալաթայի խանութպանք մեծ դիմատու կը հան-

դիպեին, այսպիսի պաշտականի մը փախստեան օգնելուն համար: Բայց Յովհաննէս Պալէոլոգ, երիտասարդ գեղեցիկ և ցոփ, շատ երջանիկ սեւ պեղ ինքզինքը ասանկ կնոյմէ մը ազատելուն հա մար, որուն լաւական ներկայութիւնը, իրեն զննորենաւոր յանդիմանութիւնն մըն էր: Չու ղէջ քննութիւնն բանալ այս գէպը միայ, որ իրեն շատ պատուաւոր էր, և տարի մը վերջը, երբ որ կըրչաւ, գարձեալ կարգուեցաւ երրորդ անգամ իշխանուհւոյ մը հետ՝ որ իրեն շատ սիւբէլ էր: Այն էր Մարիամ Կոմնենոս՝ Ալեքսիոս Տրապիզոնի կայսեր տղիկն: Նոր կայսրուհւոյն քոյրը Ճիհան Եհան Թիւրքմանաց իշխանին կինն էր, միւս քոյրն ալ Սերբիոյ երեւի Քեթրոգ Պրանցովիան իշխանին հետ կարգուած: Եղբորը մէկն էր անուանի Գալոյ — Եյուան կամ Յովհաննէս Գեղեցիկն, որ վերջը իւր հայրը սպաննէց և Տրապիզոնի կայսրն եղաւ: Նրբաւ սարգ կնոջ ընտանիքն թագաւորական ազգա կաններ էին, և շատ գեղեցիկ կին մ'էր, շատ ալ խելացի, և ինչպէս որ կըսէին ժամանակից Պատմագիրք, Ժե Գարուս ամենէն գեղեցիկ իշ խանուհիներէն մէկն էր: Կայսրը որ ամենէն ամուսնական կենաց քաղցրութիւնը չէր ունեցած, այլ միայն Պիեմոնտէի իշխանուհւոյն ցաւազին գանձաւորներն, Կոմնենոսի աղջկան վրայ շատ սէր կապէց: Վերջին աստիճանի կը սիրէր զայն, այն աւ փոխարէն շատ սէր ցըցուց իրեն: Աւկուստոս (Սքոստ) անուանեցաւ, և մեծ շքեղութեամբ Սուրբ Սոփիա մայր եկեղեցւոյն մէջ պսակուեցաւ, Յովսէփ պատրիարքին ձեռքովը: Դժբաղդաբար միշտ կայսրութեան գործերովն զբաղած, որ երթալով կը ծանրանային, կայսեր յաճախ ճամբորդութիւնները պատճառ եղան, որ երկու ամուսինք շատ անգամ բաժնուած մնան:

Նոյն տարւոյն (1427) նոյեմբեր ամսուն մէջ, Յովհաննէս Ը. Մորտա երթալու համար նաւ մտաւ, ուր մէկ տարիէն աւելի կեցաւ իւր եղբոր քով որ Միսիթրայի եպիսկոպոսն էր. ապաքայ Կոստանդինոս Տրաքոսէան, բայց իւր աւելի երկայն բացակայութիւնն եղաւ Փերբալայի Ժողովքին պատճառաւ: Նոյեմբեր 27ին, 1437 Յովհաննէս ճամբայ ելաւ դէպ 'ի Վենետիկ, ուր Հասարակապետութիւնն և ազնուականները փառաւոր և հրաշալի ընդունելութիւն մը ըրին: Հոս տեղը չէ պատմելու, այն երևելի ստեղծութիւնները, յորդմ՝ անուանի եղաւ Պէս

սարիոն Միրանաւորը, բայց անկարելի եղաւ Կոստանդնուպոլսը աղատել իւր մատուոր կործանմանէն: Սրբ որ երկու տարիէն աւելի վերջը 1440 տարւոյն առաջին օրերը Յովհաննէս գարձաւ իւր մայրաքաղաքը, խեղճ Մարիամ կայսրուհին մեռած էր քանի մը շաբաթ առաջ: Թեպէտ և իւր առաջին սերը շատ պաղած էր, իտալիոյ մէջ անցուցած կեանքէն, այսու ամենայնիւ գարձեալ շատ ցաւ իմացաւ այն կնոջ մահուանը վրայ, որուն հետ իւր կենացը գեղեցկագոյն օրերը անցուցեր էր:

Այս երկու իշխանական որոտրուն այնպէս սերտ այնպէս բուռն և միանգամայն այնչափ անցաւոր միութեան մէկ յիշատակը միայն մեզի մնացած է, Խալքի կղզւոյն Յովհաննէս Կարապետի գեղեցիկ վանքին մէջ: Յովհաննէս Պալէոլոգ շինած է այս վանքը, որ հիմայ նորոգուած է. իսկ մէջի պղտիկ մատուռը Ս. Աստուածածնայ նուիրած, որուն գմբէթը մինչև հիմայ կեցած է, մեծ եկեղեցւոյն քովը, մէջ տեղի մեծ բակին վրայ: Ժ. Գարուսն Պատմագիրք կ'ըսէն թէ՝ Մարիամ Կոմնենոսի, Յովհան Պալէոլոգի կնոջը ծախքովը շինուած է, որն որ իրենց առաջին սիրոյն ատեն ինքն ալ միաբանած էր իւր երկանը բարեպաշտ դիտաւորութեանցը. քանի որ Պալէոլոգ իր մեծ ճամբորդութիւնը ըրած չէր 'ի Փլորենտիա, ուր ընդհանուր Ժողովքին մէջ այնչափ ընդունայն անկալութիւններ ունեցաւ:

Այս Աստուածածնայ մատուռը միայն գրեթէ ամբողջ ազատուեցաւ Ժի. Գարուսն մեծ կրակէն, երբ Սուրբ Յովհաննէս գեղեցիկ եկեղեցին, որ իսպի ձեռով շինուած էր, բոլորովին այրեցաւ: Թեպէտ առաջ Յովհաննէս Կարապետի նուիրած էր, Յովհաննէս Պալէոլոգին վանքը, բայց շատ ատենէ 'ի վեր միշտ 'ի միայն Սուրբ Աստուածածնայ կամ Մայր Աստուծոյ վանք կ'անուաւ: Ինչ, հաւանականութեամբ այն գեղեցիկ պատիկ մարտին անուովը, զոր Մարիամ՝ Կոմնենոս շինել տուած էր 'ի պատիւ Աստուածածնոյ: Սրբոր երկրորդ անգամ շինուեցաւ վանքը, ոյս վերջին գարուս մէջ, գտան արուարածաններուն մէջ մեծ գրան վրայ յիշատակարանի մը բեկորները, Պաշկոպեան գեղեցիկ գրութեամբ, որ կը յիշէ կայսրուհւոյ անունը, որ շինած էր զայս: Յովհաննէս հաստատարիմ 'ի Քրիստոս կայսր և ինքնակալ Հռովմայեցոց Պաշկոպոզ:

Շարայարեչի